

Զ Ե Կ ՈՒ Յ Ց

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՊԱՏԱՆԱԾ ՕՏԱՐԵՐԿՅԱ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Հեղինակային խումբ՝

Արթուր Մաքունց

Անի Չատինյան

Նուշիկ Տեր-Մովսիսյան

Զեկույցում ներկայացվում է ներպետական եւ միջազգային պարտավորությունների համատեքստում քաղաքական հետապնդումների պատճառով ՀՀ տեղափոխված օտարերկրյա քաղաքացիների իրավունքների իրացման հնարավորությունների և վերջիններիս նկատմամբ ՀՀ-ում կիրառվող իրավական սահմանափակումների իրավաչափության վերլուծությունը:

Վանաձոր 2024

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱՊԵՆԴՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՊԱՏԱՆԱԾ ՕՏԱՐԵՐԿՅԱ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Ռուսաստանի Դաշնության կողմից Ուկրաինայի նկատմամբ սանձազերծած ագրեսիվ պատերազմի հետևանքով դեռևս 2022 թվականի սկզբից ՀՀ են տեղափոխվել բազմաթիվ անձինք, ովքեր համոզված են եղել, որ ՀՀ այն երկիրն է, որտեղ կարող են ապահով զգալ իրենց պետության իշխանությունների հետապնդումներից, և Հայաստանի Հանրապետությունում երաշխավորված կլինեն իրենց անվտանգությունը, իրավունքներն ու ազատությունները:

ՌԴ իշխանությունների կողմից հատկապես հետապնդվում են մոբիլիզացիաներից հրաժարված անձինք, լրագրողները, քաղաքական ընդդիմադիրները, պատերազմը քննադատողները, ռազմական գործողություններին մասնակցելուց հրաժարվող զինծառայողները:

Հայաստանը բնակության համար որոշ դեպքերում ընտրում են նաև քրեական գործերով անցնող անձինք, ում հետապնդման հիմքում ընկած չէ քաղաքական ենթատեքստը, սակայն կիրառվելիք պատիժը կարող է լինել անմարդկային:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակն իրավական պաշտպանություն է տրամադրել և շարունակում է տրամադրել ոչ ժողովրդավար պետությունների իշխանությունների կողմից (ինչպիսիք են Ռուսաստանի Դաշնությունը, Բելառուսի Հանրապետությունը, Իրանի Իսլամական Հանրապետությունը) թվով 130 օտարերկրա քաղաքացու: Նշված անձանց տրամադրվում է իրավական խորհրդատվություն, դատական պաշտպանության ապահովում՝ ընդհուպ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կոնվենցիոն իրավունքների խախտման հիմքով գանգատների ներկայացմամբ, պետական և իրավապահ մարմինների հետ ունեցած հարաբերություններում ներկայացուցչություն:

Իրավիճակները՝ կախված հետապնդող պետությունից, տարբեր են. օրինակ՝ Բելառուսի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիների դեպքում այդ պետությունների իշխանությունները պարտադիր դիմում են ՀՀ իշխանություններին հանձման մասին միջնորդությամբ և հատկապես այն անձանց վերաբերյալ՝ ում հետապնդումը հարուցված է բացառապես քաղաքական նկատառումներով:

Բելառուսի Հանրապետությունը հանձնելու մասին միջնորդություն է ներկայացնում այն անձանց վերաբերյալ, ովքեր 2020 թվականից հետո մասնակցել են երկրում նախագահական ընտրությունների արդյունքների կեղծման դեմ տեղի ունեցած ցույցերին կամ քննադատել են իշխանությունների քաղաքականությունը:

Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների գործերով պատկերը հիմնականում հակառակն է, այսինքն՝ հանձման մասին միջնորդություններ են ներկայացվում այն դեպքերում, երբ հետապնդումը, ըստ իրենց, դրսևորվում է քաղաքական ենթատեքստեր չունեցող հանցագործությունների դեպքերում,

օրինակ՝ հանձնման պահանջներ են ներկայացվում տնտեսական հանցագործության մեջ մեղադրվող անձանց վերաբերյալ:

2023թ. ընթացքում ՌԴ-ի կողմից Հայաստանին է ներկայացվել ընդամենը 2 միջնորդություն հանձնման մասին */(կազմակերպության գործերի շրջանակներում):* Երկու դեպքում էլ Հայաստանի կողմից կայացվել է հանձնման մասին միջնորդությունը մերժելու մասին որոշումներ, հիմնավորմամբ, որ մեղսագրվող հանցագործությունները ՀՀ-ում հանցագործություն չեն հանդիսացել՝ պահպանելով ՀՀ-ի կողմից վավերացված կոնվենցիաներով երաշխավորված սկզբունքները:

Օտարերկրյա պետությունների այն քաղաքացիները, որոնք իրենց պետությունում քաղաքական հետապնդման են ենթարկվել և ապա գտնվել են Հայաստանում, ձերբակալվում են իրենց դեմ հարուցված քրեական գործի և հետախուզման հիմքով: Հայաստանի իրավապահների կողմից նույնիսկ նման դեպքերում նրանց անվտանգությունը ապահովված է, քանի որ բացակայում է արտահանձնելու վտանգը: Սակայն ունենք մեկ բացառիկ դեպք, երբ Հայաստանի տարածքում ՌԴ քաղաքացին ձերբակալվել է ՌԴ իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից և տեղափոխվել Գյումրի քաղաքում տեղակայված թիվ 102-րդ ռազմաբազա: Այս դեպքը բացառիկ է, քանի որ անձին ակնհայտորեն առևանգել են, այնուհետ ապօրինի պահել են անազատության մեջ և արտադատական արտահանձնում իրականացրել:

2023 թ դեկտեմբերի 8-ին Կազմակերպությունը ահազանգ է ստացել այն, որ ՌԴ քաղաքացի Դմիտրի Լեոնիդովիչ Սետրակովը 2023 թվականի դեկտեմբերի 6-ին կամ 7-ին ՀՀ տարածքում ապօրինի ձերբակալվել է ռուս իրավապահների կողմից և տարվել Շիրակի մարզի Գյումրի քաղաքում տեղակայված ռուսական թիվ 102-րդ ռազմաբազա, և պահվել է ռազմաբազայի տարածքում ապօրինի անազատության մեջ: ՌԴ իրավապահներն առանց իրավական որևէ հիմնավորման, ՀՀ իրավապահների իրավագործության տարածքում ձերբակալել և ապօրինի 27 օր ժամկետով կալանավորման են ենթարկել Դ. Սետրակովին, հիմքում դնելով Ռուսաստանի Դաշնությունում հարուցված քրեական հետապնդումը (ՌԴ քրեական օրենսգրքի 337-րդ հոդված), մի քանի օր անազատության մեջ պահելուց հետո ՌԴ ռազմաբազայի ծառայողներն ապօրինի, առանց լիազորված լինելու, արտադատական արտահանձնում են իրականացրել և Դմիտրի Սետրակովին տեղափոխել են Ռուսաստան¹:

Ահազանգը ստանալու նույն օրը Կազմակերպության կողմից հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ Գլխավոր դատախազություն՝ ինքնիշխան և իրավական պետության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ՌԴ ռազմական ուստիկանության աշխատակիցների կողմից անձին առևանգելու և ՀՀ-ում տեղակայված ռուսական

¹ <https://hcav.am/azatutyun-am-11-12-2023/>
<https://hcav.am/azatutyun-am-12-12-2023/>
<https://hcav.am/azatutyun-am-22-12-2023/>

ռազմաբազայի տարածքում վերջինիս ապօրինի պահելու փաստով, ինչը ՀՀ Քրեական օրենսգրքով հետապնդելի և հանցակազմի առերևույթ տարրեր պարունակող արարք է: փաստի հիմքով անհապաղ քրեական վարույթ նախաձեռնելու և լրիվ, ամբողջական և օբյեկտիվ քննություն իրականացնելու համար ապօրինություններ թույլ տված ՌԴ իրավապահներ կառույցների ներկայացուցիչների դեմ:

Որպես իրավունքի պաշտպանության ամենաարդյունավետ միջոց կազմակերպության կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Կանոնագրքի 39-րդ հոդվածի կանոնով հրատապ միջոցներ ձեռնարկելու մասին գանգատ է ներկայացվել դատարան:

Դատարանը գանգատը ստանալուն պես ՀՀ կառավարության միջազգային իրավական հարցերով ներչայացուցչություն է ներկայացրել հարցադրումներ, սակայն հարցադրումները ՀՀ կողմից ստանալու պահին Սետրակովին արտադատական ճանապարհով ռուս զինվորականները կամ իրավապահներն արդեն տեղափոխել էին ՌԴ: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Դատարանից այդպիսի արտառոց գործի շրջանակներում հարցադրումներ ստանալուց հետո նույնիսկ ՀՀ միջազգային իրավական հարցերով ներկայացուցչությունը փորձ չի արել ճշտել, թե ինչ է տեղի ունեցել, միայն Դատարանին հայտնել է, որ նման դեպքի մասին տեղեկացված չեն:

Կանոնագրքի 39-րդ կանոնի շրջանակներում վարույթը ըստ էության ավարտված հայտարարվելուց հետո Կազմակերպության կողմից ընդհանուր կանոնով դիմում է ներկայակացվել Դատարան կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման ռիսկի և 3-րդ, 5-րդ հոդվածների խախտման հիմքով:

Ներպետական ատյաններում ներկայացված հանցագործության մասին հաղորդման հիման վրա որոշում չի կայացվել, քննություն չի իրականացվել և նույնիսկ փորձ չի արվել պարզել, թե ինչպես և ում կողմից է Սետրակովը տեղափոխվել ՀՀ տարածքից: Չի քննարկվել նույնիսկ այն հանգամանքը, թե սահմանը հատելու իրավական սահմանափակման պայմաններում, որի պատճառով ձերբակալվել է Սետրակովը, ինչպես է հնարավոր եղել հատել ՀՀ պետական սահմանը: Հանցագործության մասին հաղորդման հիման վրա քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումները /գործողությունները/ բողոքարկվում են ներպետական դատական ատյաններում:

Երկրորդ դեպքում իրավիճակը մի փոքր այլ էր: 2024 թ ապրիլի 9-ին Կազմակերպությունը ահագանգ է ստացել, որ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Անատոլի Նիկոլայեվիչ Շչետինինը ձերբակալվել է ռուսական ռազմաբազայի աշխատակիցների կողմից և 08.04.2024թ.-ին վերջինիս փորձել են արտահանձնել Ռուսաստանի Դաշնություն, սակայն հետախուզման մեջ գտնվելու և իրավական սահմանափակման՝ սահմանը հատելու արգելքի կիրառման պայմաններում հնարավոր չի եղել հանել սահմանափակումներն ու կազմակերպել Անատոլի Նիկոլայեվիչ Շչետինինի տեղափոխումը ՀՀ-ից՝ ՌԴ: Կազմակերպության ունեցած տեղեկություններով ՀՀ սահմանն անցկացնելու

փորձ եղել է ոչ մեկ անգամ, սակայն այդպես էլ ՀՀ սահմանապահները թույլ չեն տվել Շչետինինին տանել ՀՀ-ից:

Կազմակերպության կողմից ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում ՀՀ գլխավոր դատախազություն՝ ՀՀ տարածքում ռուսական ռազմաբազայի աշխատակիցների կողմից ՌԴ քաղաքացուն առևանգելու դեպքի առթիվ:

2024 թ. մայիսի 6-ին ՀՀ գլխավոր դատախազությունից ստացված պատասխանով հայտնել են, որ քրեական գործ չի հարուցվել: Կազմակերպության կողմից հետագայում նման հանցագործությունները բացառելու սկզբունքի հիման վրա կայացված որոշումները բողոքարկվել են: Որոշումների բողոքարկման ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունից գրությամբ տեղեկացրել են, որ Շչետինինը ինքնակամ է գտնվում ռազմաբազայի տարածքում, նա դիմում է գրել բազայի հրամանատարությանը և ինդրել է թույլատրել ծառայել բազայում, այժմ նա ծառայում է ռազմաբազայում: Գրության տրամաբանությունն այնպիսին է, որ Շչետինինը ինքնակամ է ներկայացել ռազմաբազա և ինքն է ցանկություն հայտնել ծառայության անցնել բազայում:

Նամանտիպ գործերով ներգրավվել և անձամբ ներկայացնել, օրինակ Սետրակովի կամ Շչետինին շահերը հնարավոր չէ, քանի որ կազմակերպության փաստաբանները չեն կարող փաստաբանական գործունություն իրականացնել ռազմաբազայի տարածքում, չնայած այն հանգամանքին, որ բազայի ծառայողները և դրան կցված իրավապահները փաստացի ՀՀ իրավական իրավագործության տարածքից հայտնաբերված և բազայի տարածքում հանցանք չգործած անձանց ձերբակալել և նրանց մասնակցությամբ քննչական գործողություններ իրականացնելու լիազորություն և իրավունք չունեն:

Իրավունքների պաշտպանության շրջանակներում արձանագրվել է երկու դեպք, երբ ՌԴ քաղաքացիներին են մոտեցել ռուս զինծառայողներ և ներկայանալով ՀՀ իրավապահ մարմնի ներկայացուցիչ՝ մի դեպքում ոստիկանության ծառայողներ, մյուս դեպքում դատախազության, փորձել են ձերբակալել, վախեցնելով, ճնշումների միջոցով հսկողության տակ վերցնել այդ անձանց:

Երևանում և Գյումրիում բնակվող օտարերկրյա քաղաքացիների երկու խումբ, ովքեր իրենց պետությունում քաղաքական հետապնդման պատճառով թաքնվում են ՀՀ-ում, նկատել են, որ մի քանի օր շարունակ ինչ որ մեքենա է հետևում իրենց, բակում մի քանի ժամ կանգնում է, իսկ մեքենայի մեջ գտնվող ՌԴ զինվորական հագուստով անձինք դիտարկում են իրենց, ուսումնասիրում, հետևում շարժին:

Կազմակերպության ուսումնասիրություններով պարզել ենք, որ ՌԴ քաղաքացիներին հետևող մեքենայի համարները գրանցված չեն համապատասխան շտեմարաններում, դրանք օպերատիվ հետախուզական գործողություններ իրականացնելու համար հատկացվող պետհամարանաիշներ են, և փաստացի օգտագործվում են ՌԴ իրավապահների կողմից:

Կազմակերպությունն ահազանգած քաղաքացիները վախից չեն ցանկացել, որ կազմակերպությունը իրավական որևէ մեխանիզմի գործադրմամբ զբաղվի իրենց իրավունքների պաշտպանությամբ, մտածելով որ իրենք կարող են բացահայտվել և արտահանվել:

ՌԴ քաղաքացիների համար իրականում Հայաստանը շարունակում է մնալ անվտանգ պետություն մինչև այն պահը, երբ հետախուզվող անձը ձերբակալման կամ բերման ենթարկվելիս գտնվում է ՀՀ իրավապահների իրավագործության ներքո: Պատկերը փոխվում է այն պահից, երբ անձին ինչ ինչ պայմաններում հայտնաբերում են Գյումրի քաղաքում տեղակայված թիվ 102 ռազմաբազայի աշխատակիցները և տեղափոխում ՌԴ իրավապահների վերահսկողության ներքո: Նմանատիպ իրավիճակները անմիջական մարտահրավեր են ՀՀ տարածքում գտնվող այլ պետությունների քաղաքացիների իրավունքների նկատմամբ, ուղղակի սպառնալիք հնարավոր արտադատական արտահանման համար:

Ոչ ժողովրդավար մյուս պետությունների՝ Բելառուսի Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության այն քաղաքացիները, որոնց իրավունքների պաշտպանությամբ զբաղվում է Կազմակերպությունը, գտնվում են մի փոքր այլ իրադրությունում: Այն բոլոր դեպքերում երբ ՀՀ-ում ձերբակալվել են Բելառուսի Հանրապետության քաղաքացիներ՝ այդ պետությունում նրանց նկատմամբ հարուցված քաղաքական նպատակներով քրեական հետապնդման հիման վրա, ՀՀ-ն տեղեկացնում է քաղաքացիության պետությանը անձի հայտնաբերման և ձերբակալման մասին, որին հաջորդում է արտահանման պահանջի ներկայացումը:

Բելառուսը, որտեղ 21-րդ դարում դեռևս շարունակում է պատժի տեսակ մնալ մահապատիժը, իր պետության գլխավոր դատախազության միջոցով, երաշխավորելով արտահանման ենթակա անձի իրավունքների և ազատությունների անխախտելիությունը, միջնորդություն է ներկայացնում ՀՀ գլխավոր դատախազություն իր քաղաքացիներին արտահանման իրականացնելու համար, իսկ դատախազությունը հիմք ընդունելով նման «երաշխավորությունը», ամիսներ շարունակ երկարացնում է կալանավորման ժամկետները, դատարանին վստահեցնելով, որ ստացել է երաշխավորական նամակ, որ չեն խախտվելու անձի մարդու իրավունքները:

Բելառուսի Հանրապետությունը արտահանման պահանջ է ներկայացրել 24 ամյա Բելառուսի քաղաքացու հանդեպ, ով խուսափել է պարտադիր զինվորական ծառայությունից: Վերջինս 2022 թ փետրվարի 28-ին Մինսկի դատարանի որոշմամբ 15 օր ժամկետով ենթարկվել է վարչական ձերբակալման և այդ նույն ժամակահատվածում ամենօրյա ռեժիմով ենթարկվել է բռնությունների, խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի ու պատժի, միայն այն բանի համար, որ համարձակվել է մասնակցել ցույցերին ու հավաքներին: Անմարդկային վերաբերմունքը դրսևորվել է պատժիչ նպատակներով, և ամբողջ վարչական ձերբակալման գործընթացն ու անազատության մեջ գտվելու ժամանակահատվածը ուղեկցվել է սպառնալիքներով: Ավելին, բելոռուսցի

իրավապահները սպառնացել են, որ զինվորական ծառայության ընթացքում վաստակավոր և նվաստացնող վերաբերմունքի է ենթարկվելու էլ ավելի դաժան ձևով և որ ծառայությունն ուղեկցվելու է պատժիչ դրսևորումներով: Այլ փրկության տարբերակ չունենալով Բելառուսի քաղաքացի Մակսիմ Վարտկիավիչուսը ուղղակի փախել է իր Բելառուսից²:

Ոչ ժողովրդավար պետությունների, ինչպիսիք են Բելառուս Հանրապետությունը, Իրանի Իսլամական Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, որոնք քաղաքական հետապնդման են ենթարկում իրենց քաղաքացիներին, որպես իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցներից մեկը, որը երաշխավորված է նաև միջազգային կոնվենցիաներով, դիմում են ՀՀ-ում ապաստան ստանալու հարցով: Կազմակերպությանը հայտնի է Բելառուսի Հանրապետության 3 քաղաքացիների դեպքեր, որոնցով արդեն իսկ ուղարկվել են արտահանձման միջնորդություններ: Քաղաքացիներից երկուսի իրավունքների պաշտպանությամբ զբաղվում է Կազմակերպությունը³:

Հատկանշական է այն հանգամանքը, որ արտահանձման նպատակով կալանավորման միջնորդության քննության ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչը դատարանին փորձում է հավաստիացնել, որ ներկայացված միջնորդությամբ Բելառուսի Հանրապետությունը վստահեցրել է, որ հանձնումը նպատակ չունի հետապնդելու անձին քաղաքական շարժառիթներով, ռասայական պատկանելիության, կրոնի, ազգության կամ քաղաքական հայացքների համար և այս ամենը ներկայացվում է այն բանից հետո, երբ անձը դատարանում ցուցմունք է տալիս իր նկատմամբ քաղաքական հետապնդումների և խոշտանգումների մասին:

Բելառուսի Հանրապետության քաղաքացիներից մեկի վերաբերյալ արդեն իսկ ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը կայացրել է որոշում, որով Բելառուսի քաղաքացուն ճանաչել է փախստական և տրամադրել է ապաստան:

Փախստականի կարգավիճակ ստանալն արդեն արտահանձնումը բացառող հանգամանք է և այս դեպքում անձն ազատ է արձակվում և որոշում է կայացվում արտահանձման միջնորդությունը մերժելու մասին:

Ապացուցողական բազայի առկայության պարագայում անգամ ՀՀ իրավասու մարմիններն անձին չեն տրամադրում ապաստան և փախստականի կարգավիճակ, դրանով իրական դարձնելով անձանց արտահանձնումը իրենց քաղաքական հետապնդման ենթարկող երկիր, օրինակ՝ Իրանի Իսլամական Հանրապետություն, որպիսի մոտեցումը և կայացված որոշումները խիստ անընդունելի լինելով մարդու իրավունքների տեսակետից, ՀՔԱՎ գրասենյակը նախաձեռնել է բողոքարկումներ դատական ատյաններում:

² <https://hcav.am/quo-vadis-hcav-26-04-2024/>

³ <https://hcav.am/statement-18-03-2024/>

1. Օտարերկրյա քաղաքացիների հիմնական իրավունքներն ու դրանց իրացման հնարավորությունները՝ ՀՀ ներպետական օրենսդրության շրջանակներում.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիներն ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հավասար իրավունքներ, ազատություններ և պարտականություններ, եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Հայաստանի Հանրապետությունը որպես իրավական և ժողովրդավարական պետություն ստանձնել է ներպետական և միջազգային իրավական պարտավորություններ, որոնց ուժով էլ բարձրագույն արժեք հանդիսացող մարդու իրավունքներով սահմանափակված են հանրային իշխանության բոլոր մարմինները՝ հանձին պետության և պետաիրավական բոլոր կառուցակարգերի: Ընդ որում, բարձրագույն արժեք հանդիսացող այլ պետության քաղաքացին նույնպես, հստակ կարգավորումների բացակայության դեպքում ունի ՀՀ քաղաքացուն վերաբերելի բոլոր իրավունքները, ազատություններն ու պարտականությունները: Այս իրավունքների թվին են դասվում ՀՀ Սահմանադրության 2-րդ՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և պարտականությունները՝ վերտառությամբ գլխով ամրագրված բոլոր իրավունքները:

Ըստ մարդու իրավունքների իրացման հնարավորության, օտարերկրացիները, բացի նրանից, որ ՀՀ-ում ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար իրավունքներ ու պարտականություններ, նաև ունեն համապատասխան իրավական մեխանիզմների հիման վրա ՀՀ-ում իրավական կարգավիճակ ձեռք բերելու, դրանով ՀՀ-ում իրենց երկարաժամկետ բնակությունը

օրինական դարձնելու և տվյալ կարգավիճակից բխող իրավական երաշխիքներից օգտվելու հնարավորություն:

Օտարերկրացիները ՀՀ-ում, համապատասխան իրավական ընթացակարգերի հիման վրա կարող են ձեռք բերել.

- ***ՀՀ քաղաքացիություն***

Ձեռքբերման հիմքերը, կարգը և պայմանները սահմանված են «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով (ընդունված՝ 06.11.1995թ.-ին), «ՀՀ քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու կարգը և ժամկետները, ինչպես նաև ազգությամբ հայ լինելը հաստատող մկրտության մասին փաստաթուղթ տրամադրող եկեղեցական կառույցների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշումով (ընդունված՝ 23.11.2007թ.)⁴, ՀՀ Կառավարության՝ N 411 որոշում առ 25 մարտ 2010թ., N 1390 որոշում առ 23 նոյեմբերի 2007թ., N 1154 որոշում առ 4 հոկտեմբերի 2007թ., N 1110 որոշում առ 20 սեպտեմբերի 2007թ. Իրավական ակտերով, հարակից այլ նորմատիվ իրավական ակտերով:

- ***Ժամանակավոր, մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ***

Կարգը և պայմանները սահմանվում են «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքով (ընդունված՝ 25.12.2006թ.), «ՀՀ-ում ժամանակավոր կամ մշտական կացության կարգավիճակ ստանալու (կացության կարգավիճակը երկարաձգելու) դիմումի հետ ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դիմումի քննարկման կարգը... հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշմամբ (ընդունված՝ 07.02.2008թ.ին) «ԵՄ անդամ պետությունների...քաղաքացիներին ՀՀ մուտքի վիզայի պահանջից ազատելու մասին» ՀՀ Կառավարության որոշմամբ (ընդունված՝ 04.10.2012թ.) և այլ իրավական ակտերով:

- ***Այաստանի ստացում և փախստականի կարգավիճակ***

Ձեռքբերման հիմքերը, կարգը և պայմանները սահմանվում են «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով (ընդունված՝ 27.11.2008թ.-ին):

Ի թիվս վերը նշված իրավական կարգավիճակների տրամադրման հնարավորության, ՀՀ-ում ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային պարտավորությունների ուժով երաշխավորվում են օտարերկրացիներին ՀՀ-ից արտաքսման և արտահանձնման համար համապատասխան վարույթային կարգի պահպանումն ու դրա իրականացումը՝ բացառապես համարժեք հիմքերի առկայության պարագայում:

Այսպես, օտարերկրացիներին ՀՀ տարածքից արտաքսելու իրավական մեխանիզմները՝ հանձին արտաքսման և արտահանձնման, հստակորեն

⁴ Տե՛ս որոշման էլեկտրոնային հղումը՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=180370>

ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ և միջազգային կոնվենցիաներով և դրանցից ցանկացած շեղում կհանդիսանա մարդու հիմնարար այնպիսի իրավունքների խախտում, ինչպիսիք են կյանքի, խոշտանգումների արգելքի, ազատ տեղաշարժի, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների, արդար դատաքննության, բացառապես օրենքի հիման վրա պատժի ենթարկվելու իրավունքները:

Մասնավորապես, Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ եթե սույն օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված դեպքերում օտարերկրացին կամավոր չի հեռացել Հայաստանի Հանրապետության տարածքից, ապա Հայաստանի Հանրապետության լիազորված պետական կառավարման մարմինը *արտաքսման վերաբերյալ գործ է հարուցում և ներկայացնում դատարան:*

Օտարերկրացին, որը ենթակա է արտաքսման Հայաստանի Հանրապետությունից, օգտվում է դատական պաշտպանության համար Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված բոլոր իրավունքներից: (Հոդված 33)

Արտաքսման վերաբերյալ գործի քննության արդյունքում դատարանը կայացնում է որոշում օտարերկրացու արտաքսումը մերժելու մասին: Արտաքսման մասին դատարանի որոշման մեջ նշվում են օտարերկրացու արտաքսման օրը, երթուղին, պետական սահմանի անցման կետը, արտաքսման ծախսերը հոգալու, մինչև Հայաստանի Հանրապետության տարածքից հեռանալը նրա բնակվելու վայրի, որոշակի պարբերականությամբ ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի համապատասխան ստորաբաժանում ներկայանալու պարտավորության, ինչպես նաև առանց թույլտվության բնակության վայրը թողնելու արգելքի մասին, սույնս օրենքի 6-րդ գլխով նախատեսված դեպքերում ձերբակալված լինելու դեպքում մինչև արտաքսումը ձերբակալման մեջ պահելու կամ ազատ արձակելու մասին:

Արտաքսումը մերժելու մասին դատարանի որոշման մեջ նշվում է ժամանակավոր կացության կարգավիճակ տալու՝ ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի պարտականության մասին: (Հոդված 33) *Արտաքսման մասին որոշումը օտարերկրացին կարող է բողոքարկել օրենքով սահմանված կարգով:* *Արտաքսման մասին որոշման բողոքարկման դեպքում օտարերկրացու արտաքսումը Հայաստանի Հանրապետությունից կասեցվում է:* (Հոդված 33)

Դատալեքս տեղեկատվական համակարգի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ ՀՀ վարչական դատարանում մեծ քանակի գործեր են քննվել ու շարունակում են քննվել հիմնականում Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներին ՀՀ տարածքից արտաքսելու մասին: *Արտաքսման գործերը հարուցված են հիմնականում այն դեպքերում, երբ օտարերկրացիները ՀՀ տարածքում հանցագործություն են գործել և ըստ կայացված վճիռների՝ պետք է պատիժը կրելուց հետո արտաքսվեն:*

Ինչ վերաբերում է օտարերկրացուն հանձնելուն, ապա.

“Օտարերկրացիների հանձնումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով:

Օտարերկրացիների հանձնումն արգելվում է, եթե այն արարքի համար, որի կատարման համար օտարերկրացիները պատասխանատվության են կանչվում, նախատեսված է մահապատիժ, կամ լուրջ հիմքեր կան կասկածելու, որ կարող են ենթարկվել խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ նվաստացնող պատժի կամ վերաբերմունքի: (Հոդված 41)”

Վերը նշված իրավանորմերը վկայում են, որ նախորդիվ նկարագրված իրավիճակներում Հայաստանի Հանրապետությունում հաստատված օտարերկրացիներն առանց որևէ ընթացակարգային նորմերի պահպանման չեն կարող արտահանվել Հայաստանից և վերադարձվել այն պետությանը, որի կողմից քաղաքացին ենթարկվում է քաղաքական հետապնդման:

ՀՀ ներպետական օրենսդրությամբ նշված մոտեցումն ամրագրվել է միջազգային կոնվենցիաներով ՀՀ վավերացրած պարտավորությունների հիման վրա:

Մասնավորապես, Հանձնման մասին Եվրոպական Կոնվենցիայի համաձայն (ընդունված՝ 13.12.1957թ.-ին, Փարիզ), հանձնում չի իրականացվում, եթե հանցագործությունը, որի համար այն հայցվում է, հայցվող կողմը ճանաչում է որպես քաղաքական հանցագործություն կամ քաղաքական հանցագործության հետ կապ ունեցող:

2. Նույն կարգը պետք է կիրառվի, եթե պետությունն ունի բավարար հիմքեր՝ համարելու, որ **սովորական քրեական հանցագործության համար հանձնման վերաբերյալ հարցումը ներկայացված է անձի ռասայի, կրոնի, ազգության կամ քաղաքական կարծիքի հետապնդման և պատժման նպատակով**, կամ՝ որ այդ անձին կարող է վնաս հասցվել այս հանգամանքներից որևէ մեկի պատճառով:

Կոնվենցիայի 26-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը կատարել է վերապահումներ և հայտարարություններ՝ հետևյալի կապակցությամբ.

1) Կոնվենցիայի 1-ին հոդվածի առնչությամբ իրեն իրավունք է վերապահում մերժել հանձնումը հետևյալ դեպքերում.

ա) եթե հանձնման դեպքում հայցող պետության տարածքում հանձնման ենթակա անձը կենթարկվի քրեական պատասխանատվության արտակարգ դատարանի կողմից, կամ եթե հանձնման ենթակա անձի նկատմամբ ի կատար ածվելիք դատավճիռը կայացվել է նման դատարանի կողմից.

բ) եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ հանձնման ենթակա անձի տարիքի կամ առողջական վիճակի հետևանքով հանձնումը կվատթարացնի այդ անձի առողջական վիճակը կամ կսպառնա նրա կյանքին.

գ) էթե հանձնման ենթակա անձին Հայաստանի Հանրապետության տարածքում տրված է քաղաքական ապաստան:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանն անդրադառնալով մարդուն արտահանձնելու և/կամ արտաքսելու դեպքերին, դրանք, որպես կանոն, դիտարկում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական Կոնվենցիայի (այսուհետ՝ նաև ՄԻԵ Կոնվենցիա) 2-րդ՝ Կյանքի իրավունք, 3-րդ՝ Խոշտանգումների արգելում և 8-րդ՝ Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքների պաշտպանության լույսի ներքո:

Այսպես, *Կոնվենցիայի 2-րդ հոդվածն արգելում է անձի արտահանձնումը և արտաքսումը մեկ այլ պետություն, էթե էական հիմքեր կան կարծելու, որ այդ անձն այնտեղ հայտնվելու է մահապատժի ենթարկվելու իրական վտանգի տակ* («Ալ Նաշիրին ընդդեմ Լեհաստանի», § 577, «Ֆ.Գ.-ն ընդդեմ Շվեդիայի» [ՄՊ], § 110): Մեկ այլ գործով, երբ գոյություն ունի **հիմնավոր պահանջ առ այն, որ արտաքսումը կարող է հանգեցնել միջամտության** քաղաքացիություն չունեցող անձի՝ անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին, Կոնվենցիայի 13-րդ հոդվածը՝ 8-րդ հոդվածի համակցությամբ, պահանջում է, որ պետությունը շահագրգիռ անձին տրամադրի վտարման որոշումը կամ կացության կարգավիճակի տրամադրման **մերժումը բողոքարկելու, ինչպես նաև անկախության և անկողմնակալության բավարար երաշխիքներ ապահովող ներպետական իրավասու ատյանի կողմից գործին վերաբերող հարցերի բավականաչափ խորը և պատշաճ ընթացակարգային երաշխիքներ ի պահպանմամբ քննության արդյունավետ հնարավորություն** («Դե Սուզա Ռիբեյրոն ընդդեմ Ֆրանսիայի» [ՄՊ], § 83, «Մ.-ն և այլք ընդդեմ Բուլղարիայի», §§ 122-132, «Ալ-Նաշիֆն ընդդեմ Բուլղարիայի», § 133):

ՀՀ կողմից արտահանձման գործերի ուսումնասիրության, քննության և որոշում կայացնելուն ուղղված գործընթացը պետք է ուղղված լինի միջազգային սկզբունքների խստորեն պահպանմանը, հակառակ պարագայում ՀՀ-ն կխախտի մարդու իրավունքները:

2. Օտարերկրացիների նկատմամբ ՀՀ-ում կիրառվող իրավունքների սահմանափակումները և դրանց իրավաչափությունը

Ինչպես վերը նշվեց, տարբեր պետությունների քաղաքացիներ, իրենց քաղաքացիության պետություններում ենթարկվելով քաղաքական կամ այլ բնույթի հետապնդման, լքում են իրենց պետություններն ու ժամանում Հայաստան՝ կամ ՀՀ-ում բնակություն հաստատելու, կամ ՀՀ-ն որպես տարանցիկ պետություն երրորդ պետություն մեկնելու նպատակով: Սակայն, ՀՀ-ում վերջիններս բախվում են իրավունքների սահմանափակման, որոնք պայմանավորված են իրենց քաղաքացիության պետությունում ունեցած հետապնդումներով: Հիմնականում սահմանափակվում են ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության, մասնավոր և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքները:

2.1. Ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակում.

Անդրադառնալով ՀՀ-ում սահմանափակվող իրավունքներից յուրաքանչյուրին, արձանագրենք, որ օտարերկրացիների ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակումները մեծ ծավալներ սկսեցին կրել հատկապես 2022 թվականից հետո, ՌԴ-ում կամ Բելառուսի Հանրապետությունում քաղաքական հետապնդումներից խուսափած և այդ հիմքով ՀՀ տեղափոխված այդ պետությունների քաղաքացիների նկատմամբ, երբ Հայաստան ժամանելուց հետո վերջիններս ձերբակալվում էին ՀՀ իրավասու պետական մարմինների կողմից և սահմանափակվում էր նրանց ՀՀ-ում ազատ տեղաշարժի իրավունքը :

Այսպես, ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման իրավաչափության վիճարկման և այդ սահմանափակումները հանելուն պարտավորեցնելու վարույթներով՝ արտադատական և դատական փուլերում ՀՀ ՆԳՆ կողմից որպես իրավական հիմնավորում ներկայացվում է *«ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգը ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը հաստատելու մասին»* ՀՀ Կառավարության 22 հունիսի 2006 թվականի N 884-Ն որոշումը, հղում տալով որոշման՝ 2-րդ գլխի 5-րդ կետի «Ե» ենթակետի դրույթները:⁵

Ըստ վերը նշված որոշման, սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ նաև ՄԷԿՏ համակարգ) շահագործման համար անհրաժեշտ տվյալների տրամադրման աղբյուրներն են՝

5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) բաժանորդային կետերից համակարգչային կապով ստացվող տվյալները՝

ե) հետախուզման մեջ գտնվող անձանց տվյալները (հետախուզման հիմք հանդիսացող քրեական վարույթի համարը, նախաձեռնողը, նրա հետ կապ հաստատելու պարտադիր տվյալները, քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը, կիրառվող միջոցը, հետախուզումը դադարեցնելու մասին տվյալները)՝ հետախուզում հայտարարելու կամ դադարեցնելու պահին:

Վկայակոչված նորմով ՄԷԿՏ համակարգում անձի իրավունքների սահմանափակման կիրառման հիմք է դիտարկվում նաև անձի նկատմամբ առկա քրեական հետախուզման փաստը, սակայն որևէ խոսք անգամ չկա այլ պետության կողմից և այլ պետության տարածքում անձի նկատմամբ կիրառված հետախուզման և դրա՝ ՀՀ-ում կիրառելիության իրավաչափությանը: Միաժամանակ, նշված իրավանորմով որևէ վկայակոչում չկա նաև այն մասին, որ այլ պետության տարածքում հետախուզման փաստը կարող է հանդիսանալ անձի տեղաշարժման իրավունքի սահմանափակման հիմք: Ըստ այդմ՝ ՄԷԿՏ համակարգի շահագործման համար անհրաժեշտ տվյալների աղբյուր հանդիսանալու հանգամանքը դեռևս այլ պետությունում անձի նկատմամբ հայտարարված քրեական հետախուզումը չի կարող հանդիսանալ ՀՀ-ում անձի տեղաշարժման իրավունքի սահմանափակման հիմնավորում:

⁵ Տե՛ս, վկայակոչված որոշման էլեկտրոնային հղումը՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=165352>

Այսինքն, ՄԷԿՏ համակարգի շահագործման կամ գործարկման իրավասությունն ունեցող ՀՀ ՆԳՆ-ի համար այլ պետության, օրինակ Ռուսաստանի Դաշնության կամ Բելոռուսի Հանրապետության իրավապահների կողմից անձի նկատմամբ քրեական հետախուզում հայտարարելու մասին որոշումը կարող է ընդամենը հանդիսանալ “ՄԷԿՏ-ի շահագործման համար անհրաժեշտ տվյալների տրամադրման աղբյուր”, որը ***որնեւ առընչություն չունի ստացված տվյալների հիման վրա անձի նկատմամբ ՀՀ-ում հիմնարար իրավունքի սահմանափակման իրավաչափության հետ:***

Անդրադառնալով երկրորդ իրավական հիմնավորմանը, ՀՀ ՆԳՆ-ն ի պատասխան հայցադիմումներին կամ արտադատական գրություններին վկայակոչում է “Հանցավորության դեմ պայքարում տեղեկատվական փոխանակման մասին” ԱՊՀ երկրների միջև կնքված Համաձայնագիրը (այսուհետ՝ նաև Համաձայնագիր):⁶

Սույն համաձայնագիրը կազմվել է 2009թ. մայիսի 22-ին, Աստանա քաղաքում: Համաձայնագրի անդամ՝ Համաձայնագիրը ստորագրած պետություններ են համարվում Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Սոլդովայի (վերապահումով), Տաջիկստանի, Ուզբեկստանի և Ուկրաինայի (վերապահումով) Հանրապետությունները և Ռուսաստանի Դաշնությունը (այսուհետ՝ նաև Կողմեր):

Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ է մտել 2010 թվականի հոկտեմբերի 27-ից:

Սույն փաստադրոյթով Կողմերը գալիս են համաձայնության, որ “Հանցագործությունները կանխելու, բացահայտելու, խափանելու, հայտնաբերելու և հետաքննելու նպատակով անհատույց ձևով, հարցումների համաձայն տրամադրում են տեղեկություններ, որոնք կան օպերատիվ-տեղեկատվական, հետախուզական, քրեագիտական և այլ հաշվառումներում, արխիվներում, ինչպես նաև իրականացնում են իրենց տնօրինությանը ենթակա գիտատեխնիկական, տեղեկատվական-վերլուծական նյութերի և նորմատիվ իրավական ակտերի փոխանակում հանցավորության դեմ պայքարի ոլորտում: Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է Կողմերի պետությունների օրենսդրությանը և միջազգային պարտավորություններին համապատասխան: Կողմերը համագործակցում են իրենց իրավավոր մարմինների միջոցով”:

“Կողմերի իրավասու մարմինների համագործակցությունն իրականացվում է տեղեկատվություն ուղարկելու և տեղեկատվության տրամադրման մասին հարցումները /այսուհետ՝ հարցում/ կատարելու միջոցով: Տեղեկատվությունը մյուս Կողմին կարող է փոխանցվել նախաձեռնության ձևով, եթե հիմքեր կան ենթադրելու, որ դա հետաքրքրություն է ներկայացնում այդ Կողմի համար”:

⁶ Տե՛ս, Համաձայնագրի էլեկտրոնային հղումը՝ <http://www.parliament.am/library/APH/175.pdf>

“Հայցվող Կողմի իրավասու մարմինը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները հարցման ամբողջական, ժամանակին և որակյալ կատարումն ապահովելու համար”:

Այսպիսով, վկայակոչված Համաձայնագրով սահմանված ՀՀ իրավասու մարմին հանդիսացող Ներքին գործերի նախարարության համոզմամբ հանդիսանում են ՌԴ և/կամ ԲՀ քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակումը ՀՀ-ում իրավաչափ համարելու և այդ սահմանափակումը կիրառելու իրավական հիմք: Նշված Համաձայնագրի բոլոր կետերն, առանց բացառության, վերաբերում են Կողմերի միջև հանցավորության դեմ պայքարում տեղեկատվության փոխանակման պարտավորությանը, որը դրսևորվում է կամ Կողմի պահանջով, կամ սեփական նախաձեռնությամբ հարցումներ ուղարկելու և դրանց պատշաճ պատասխանելու պարտավորությամբ: Սույն պայմաններում, խոսք անգամ չկա այս Համաձայնագրի շրջանակներում Կողմ հանդիսացող պետության քաղաքացիներից որևէ մեկի նկատմամբ ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման, դրա թույլատրելիության կամ դրա օրինակության վերաբերյալ:

Ազատ տեղաշարժվելու իրավունքը, հանդիսանալով մարդու և քաղաքացու հիմնարար իրավունք, ունի սահմանափակման խիստ բարձր թույլատրելիության շեմ, համաձայն որի՝ ազատ տեղաշարժման իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում՝ հետապնդելով միայն օրենքով սահմանված իրավաչափ և թույլատրելի նպատակ:

Ըստ այդմ,

ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք:

3. Յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունք:

4. **Ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ:**

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն՝

1. Որևէ պետության տարածքում օրինական կարգով գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու և ազատորեն բնակության վայր ընտրելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք ունի ցանկացած երկրից, ներառյալ իր սեփական երկիրը, հեռանալու իրավունք:

3. Այդ իրավունքների իրականացման նկատմամբ չպետք է կիրառվի որևէ սահմանափակում, բացառությամբ այն սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության ապահովության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով:

4. 1-ին կետում շարադրված իրավունքները ևս կարող են որոշ ոլորտներում ենթարկվել սահմանափակումների, որոնք կիրառվում են օրենքին համապատասխան և արդարացվում են ժողովրդավարական հասարակության հասարակական շահերով:

Ամփոփելով, նշենք, որ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, սկզբունքորեն անթույլատրելի համարելով այլ պետության տարածքում քաղաքական հետապնդման ենթարկվող անձի իրավունքների որևէ սահմանափակում, Հայաստանի Հանրապետության տարածքում, բացառությամբ այն դեպքերի, երբ անձը Հայաստանի Հանրապետության տարածքում կատարել է քրեորեն հետապնդել արարք, մոտ երկու տարվա ընթացքում անվճար իրավական խորհրդատվություն է տրամադրել հարյուր երեսուն օտարերկրյա քաղաքացու, զբաղվել օտարերկրացիների մարդու իրավունքների պաշտպանությամբ՝ ներպետական և միջազգային հարթակներում, հասնելով երկու տասնյակի հասնող օտարերկրյա քաղաքացիների իրավունքների վերականգնում՝ մասնավորապես ՀՀ-ում վերջիններիս նկատմամբ կիրառված ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակումների վերացման և ՀՀ պետական սահմանն անարգել հատելու հնարավորության ընձեռնում:⁷

Միաժամանակ, արդարացիորեն պիտի նշենք, որ թեև օտարերկրացիների նկատմամբ կիրառվող ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակումների կիրառմանը, հաջողվել է ստեղծել որոշակի համագործակցային երկխոսություն սույն խնդրի շրջանակներում պետական իրավասու մարմնի՝ ՀՀ Ներքին գործերի նախարարության, ինչպես նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և ՀՀ գլխավոր դատախազության հետ, որի արդյունքում վերացվում են օտարերկրացիների նկատմամբ իրենց պետությունների կողմից քաղաքական հետապնդման ենթարկվելու հիմքով ՀՀ-ում կիրառված սահմանափակումներն ու թույլատրվում է վերջիններիս անարգել ելքը ՀՀ-ից: Ուստի, զարգացնելով այս

⁷ Տե՛ս, քննարկվող թեմայով ՀՔԱՎ գրասենյակի գործունեության առավել մանրամասն նկարագրությունը
<https://hcav.am/extradition-28-11-2023/>

դրական միտումը, որպես տեսլական ունենք նման հիմքով օտարերկրացիների նկատմամբ ՀՀ-ում առհասարակ որևէ սահմանափակում չկիրառելու օրինական և իրավահեն ակնկալիքն ու շարունակում ենք ջանքեր գործադրել դրան խոչընդոտող նորմերի, ինչպես նաև պրակտիկայի ձևավորման վերացման ուղղությամբ:

2.2. Հավաքների ազատության իրավունքի և անձնական տվյալների պաշտպանության իրավունքի սահմանափակումներ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք:

2. Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ:

44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունք:

Նախորդ երկու տարիների ընթացքում ՀՀ-ում արձանագրվել են համապատասխան իրավանորմերով երաշխավորվող իրավունքների իրացման սահմանափակումների դեպքեր: Մասնավորապես, 16.02.2024թ.-ին Գյումրի քաղաքում գտնվող ՌԴ գլխավոր հյուպատոսարանի մոտ Ալեքսեյ Նավալնիի հիշատակին նվիրված խաղաղ ակցիայի ժամանակ ՀՀ Ոստիկանության աշխատակիցները պահանջել են ակցիային մասնակցող բոլոր օտարերկրյա քաղաքացիների անձագրերը, լրացրել դրանցում առկա տվյալներն ու ցուցակագրել ակցիայի մասնակիցներին, որը հանդիսանում է անձանց խաղաղ հավաքների իրավունքի ոչ իրավաչափ միջամտություն և ազատ հավաքի իրավունքի խախտում:

ՀՔԱՎ գրասենյակը ստացել է բազմաթիվ զանգեր և գրավոր դիմումներ, խաղաղ ակցիային մասնակցող ՌԴ քաղաքացիներից, առ այն, որ «...նշված ակցիայի ընթացքում ՀՀ ոստիկանության աշխատակիցները կազմել են ակցիայի մասնակիցների ցուցակը, որի համար ներկայացրել են անձր հաստատող փաստաթուղթ ներկայացնելու պահանջ, լրացրել անձնագրի սերիան և համարը, ՀՀ տարածքում գրանցման առկայության/բացակայության մասին տվյալները (առկայության դեպքում նշվել է նաև գրանցման հասցեն), լրացրել են տեղեկություններ քաղաքացիների զբաղվածության և աշխատանքի մասին,

ինչպես նաև պահանջել են ակցիայի մասնակիցների հեռախոսահամարները կամ այլ կոնտակտային տվյալներ»:

Համացանցում տարածված լուրերը նույնպես վկայում են⁸, որ Ռուսաստանի ընդհանրապես գործչի բազմահազար գաղափարական հետևորդների կողմից նրա հիշատակին նվիրված բողոքի ակցիաները արգելված լինելով ՌԴ իրավասու մարմինների կողմից, փաստորեն իր ազդեցությունն են ունեցել ինքիշխան Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվելիք նույն նպատակով խաղաղ հավաքի վրա: ՀՀ ոստիկանության աշխատակիցները հավաքին մասնակցող անձանց տվյալների անօրինական հավաքագրմամբ, ըստ էության, խոչընդոտել են վերջիններիս՝ հավաքների ազատության իրավունքի իրացմանը, ստեղծել վախի և հավաքագրված անձնական տեղեկությունների միջոցով հետագայում վերջիններիս հետապնդումների ենթարկելու ուղղակի սպառնալիք: Մասնավորապես, ըստ վկայակոչված լրատվական նյութերի՝

«Ռուսաստանի դատախազությունը զգուշացրել է քաղաքացիներին չմասնակցել Նավալնու մահվանից հետո անցկացվող ցույցերին: Մահացած ընդդիմադիր գործչի աջակիցներն ավելի վաղ հայտարարել էին, թե զանգվածային ցույց են նախատեսում Մոսկվայում:

*«Զգուշացնում ենք, որ զանգվածային միջոցառումը չի արտոնվել և դրան արձագանք կտրվի օրենքի սահմաններում», - հայտարարել է ՌԴ դատախազությունը»:*⁹

Մինչդեռ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Անդրադառնալով քննարկվող իրավունքների վերաբերյալ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այնուհետ՝ նաև ՄԻԵԴ) ներկայացրած դիրքորոշմանը, ապա «Դատարանը նախ և առաջ վերահաստատում է, որ **ժողովրդավարական հասարակության հիմքերից մեկով՝ հավաքների ազատության իրավունքով**, նախատեսվում են մի շարք բացառություններ, որոնք պետք է մեկնաբանվեն նեղ իմաստով, և ցանկացած սահմանափակման անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հիմնավորվի: Երբ

⁸ Տե՛ս, <https://www.sibreal.org/a/politsiya-zaderzhivaet-uchastnikov-aktsiy-pamyati-navalnogo-za-tsvety-i-podhody-k-pamyatnikam/32827190.html>

“Полиция задерживает участников акций памяти Навального”.

<https://www.golosameriki.com/a/navalny-was-detained/7509977.html>

“В России в день похорон Навального полиция задержала более 120 участников акций памяти политика”

<https://shorturl.at/PG4Yp>

“В Москве задержали как минимум четверых участников акций памяти Навального”

⁹ Տե՛ս, <https://www.azatutyun.am/a/32822873.html>

ուսումնասիրվում է այն հարցը, թե արդյոք Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների մասով սահմանափակումները կարող են համարվել «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում», Պայմանավորվող պետություններին վերապահվում է հայեցողական լիազորությունների որոշակի, սակայն ոչ անսահմանափակ շրջանակ: (տե՛ս *Կուդրեվիչիուսի և այլոց գործը*, վերևում հիշատակված, § 142):

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքը ՄԻԵԴ-ի կողմից դիտարկվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այնուհետ՝ նաև ՄԻԵԿ) 8-րդ՝ Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի շրջանակներում: 8-րդ հոդվածի վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքը, ընդհանուր առմամբ, ճանաչում է անձնական կյանքի և դրա հետ կապված արժեքների կարևորությունը: Այդ արժեքները, ի թիվս այլնի, ներառում են բարեկեցությունը և արժանապատվությունը («Բեյգարասը և Լևիցկասն ընդդեմ Լիտվայի», § 117), անհատականության զարգացումը («Ֆոն Զանովերն ընդդեմ Գերմանիայի (թիվ 2)» [ՄՊ], § 95), ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը («Սյոդերմանն ընդդեմ Շվեդիայի», [ՄՊ], § 80), այլ անձանց հետ հարաբերությունները («Կուդերկը և Աշետ Ֆիլիպակի Գործընկերներն ընդդեմ Ֆրանսիայի» [ՄՊ], § 83), ***անձնական տվյալների պաշտպանությունը*** («Մ.Լ.-ն և Վ.Վ.-ն ընդդեմ Գերմանիայի», § 87) և անձի պատկերը («Ռեկլուսը և Դավուրլիսն ընդդեմ Հունաստանի», § 38):

Համադրելով վերը շարադրված իրավանորմերը նկարագրված փաստական հանգամանքների հետ, գտնում ենք, որ նշված դեպքի առթիվ ՀՀ Ոստիկանության աշխատակիցների կողմից դրսևորվել է ոչ իրավաչափ և անթույլատրելի վարքագիծ, խախտվել են ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների՝ հավաքների ազատության ու անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական և կոնվենցիոն իրավունքները, որպիսի գործողությունը ՀՔԱՎ պնդմամբ, ներկայացված հանցագործության մասին հաղորդմամբ և ծառայողական քննության իրականացման պահանջով, պիտի՝ ենթարկվի պատշաճ քննության և ստանա իր համարժեք իրավական գնահատականը, կանխելու համար հավաքների ազատության հետագա հնարավոր խախտումները:

2.3. Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի սահմանափակումներ.

Քննարկվող գրեթե բոլոր դեպքերով, այլ պետության տարածքում քաղաքական հայացքների համար քրեական հետապնդման ենթարկվող օտարերկրացիներից շատերը Հայաստան ժամանելիս, անմիջապես օդանավակայանում կամ սահմանային անցակետերում ազատազրկվում են մի քանի ժամով:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.

2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.

3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.

6) հանրության համար վտանգավոր վարակիչ հիվանդությունների տարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վտանգը կանխելու նպատակով.

7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

2. Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածը նույնպես սահմանում է ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը, ըստ որի.

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ՄԻԵԴ նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետում հռչակվող «ազատության իրավունքը» վերաբերում է անձնական ազատությանը՝ դրա դասական իմաստով, այսինքն՝ անձի ֆիզիկական ազատությանը: Նշված դրույթի նպատակն է երաշխավորել, որպեսզի **որևէ անձ կամայականորեն չզրկվի ազատությունից**: Հարկ է նշել, որ խոսքը չի վերաբերում այնպիսի սահմանափակումներին, ինչպիսին տեղաշարժի ազատությունն է: Այս հանգամանքը հստակորեն բխում է «ազատությունից զրկված», «ձերբակալում» և «կալանավորում» եզրույթներից, որոնք առկա են նաև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-5-րդ կետերում: Այն բխում է նաև 5-րդ հոդվածի և Կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների այլ հոդվածների դրույթների համեմատությունից:

Իրենց քաղաքացիության պետություններում քաղաքական նպատակներով քրեական հետապնդման ենթարկվող օտարերկրացիների մեծամասնությունը ՀՀ ժամանակիս նախ բախվում է ազատության սահմանափակման հետ, երկրորդ,

երբեմն ազատության սահմանափակումը ՀՀ տարածքում իրականացվում է այլ պետության իրավասու մարմինների աշխատակիցների կողմից: Այս պարագայում խոսքը վերաբերում է «Զվարթնոց» օդանավակայանում սահմանապահ անցակետը հսկող ռուսական անվտանգության ծառայության ներկայացուցիչների առկայությանը, որոնք ոչ միայն վերահսկում են անձանց մուտքները և ելքերը ՀՀ-ից, այլ նաև ունեն խիստ վիճարկելի մանդատ՝ ՌԴ քաղաքական հետապնդումներից խուսափած և արդյունքում ՀՀ ժամանած օտարերկրյա, այդ թվում ՌԴ-ի և Բելոռուսի քաղաքացիներին ՀՀ տարածքում, առանց ՀՀ իրավասու մարմինների ներկայության կամ մասնակցության, անորոշ ժամկետով ազատազրկելու, վերջիններիս վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու, նոր միայն ՀՀ մուտքը թույլատրելու վերաբերյալ: ¹⁰

ՀՔԱՎ գրասենյակը բազմիցս անդադարձել է նշված հարցին՝ այն համարելով խնդրահարույց ինչպես ՀՀ ինքնիշխանության, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից¹¹: 2024թ. մարտի 6-ին ՀՀ Անվտանգության խորհրդի կողմից պաշտոնական գրություն է ուղարկվել Ռուսաստանի Դաշնություն, վերջինիս սահմանապահ զորքերին «Զվարթնոց» օդանավակայանից դուրս բերելու և «Զվարթնոց» օդանավակայանում ՌԴ սահմանապահ զորքերի գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ:¹² Մասնավորապես, ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը նշվածի կապակցությամբ պարզաբանել է. «Հայաստանի դիրքորոշումն այն է, որ Հայաստանի սահմանապահ զորքերը պետք է ամբողջությամբ իրականացնեն ծառայությունը «Զվարթնոց» օդանավակայանում»:¹³

*Հիշեցնենք, որ **ռուսական սահմանապահ զորքերի կողմից ՀՀ տարածքում իրականացվող սահմանապահ առաքելության վերաբերյալ լիազորությունները սահմանված են դեռևս 30.09.1992 թ.-ին ստորագրված «ՀՀ եւ ՌԴ միջև ՀՀ տարածքում գտնվող ՌԴ սահմանապահ զորքերի կարգավիճակի եւ նրանց կենսազործունեության մասին» պայմանագրով¹⁴: Ի տարբերություն պայմանագրով սահմանված մնացյալ լիազորությունների, պայմանագրում երբևէ նախատեսված չի եղել և չկա ռուսական սահմանապահ զորքերի կողմից «Զվարթնոց» օդանավակայանում սահմանափակ գործունեության իրականացման որևէ լիազորությունը:***

¹⁰ Տե՛ս, ՀՔԱՎ վարույթում գտնված նմանատիպ գործերը՝ Իրինա Բելաչեու- <https://hcav.am/statement2-19-07-2023/> <https://hcav.am/statement-19-07-2023/>

Մարիա Ռոուզ- <https://hcav.am/epress-30-05-2023/> <https://hcav.am/maria-rose-17-07-2023/>

Վերաբերելի տեսանյութ՝ <https://www.youtube.com/watch?v=4zBpNWbDkGY&t=63s>

¹¹ Տե՛ս, <https://hcav.am/lragir-am-6-5-19-1/>

¹² Տե՛ս, <https://www.rbc.ru/rbcfreeneews/65f02b469a79472a9cf53582>

¹³ Տե՛ս, <https://news.am/arm/news/811026.html>

¹⁴ Տե՛ս պայմանագիրը՝ <https://uic.am/wp-content/uploads/2015/08/Paym-sahmanapah-arm.pdf>

Արդյունքում, 2024թ.-ի օգոստոսի 1-ից «Զվարթնոց» օդանավակայանում կդադարեցվի ռուսական սահմանապահ զորքերի ծառայությունը, որի մասին պաշտոնական հայտարարությամբ հանդես է եկել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:¹⁵

2.4. Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների սահմանափակման թույլատրելիության ներպետական և միջազգային ընդհանուր չափանիշները

Անդրադառնալով մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների սահմանափակման հարցին, արձանագրենք, որ դրանք պիտի լինեն ամրագրված բացառապես օրենքով և միայն հստակ գործող իրավական սկզբունքների սահմանում:

ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված **համաչափության սկզբունքի** համաձայն՝ *Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:*

Այս սկզբունքի հետ կապված ՀՀ Սահմանադրական դատարանը թիվ-649 որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը, որ «*համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը)*»:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված **որոշակիության սկզբունքի** համաձայն՝ *Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:*

Միաժամանակ, 80-րդ հոդվածով սահմանված՝ *հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիության սկզբունքի* համաձայն՝ *Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:*

Սահմանադրական իրավունքներն ու ազատությունները անձի հիմնարար իրավունքներն են, որոնք իրենց ամբողջությամբ սահմանում են անձի սահմանադրական կարգավիճակը: Անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնցով դրանք տարբերվում են անձի այլ, ոչ հիմնական իրավունքներից և ազատություններից:

¹⁵ Տե՛ս, <https://www.azatutyun.am/a/32939365.html>

1) հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները ամրագրված են Սահմանադրության մեջ,

2) անմիջականորեն արտահայտում են պետության և անհատի փոխհարաբերությունները,

3) այդ իրավունքներն ու ազատությունները կրում են մշտական բնույթ և անօտարելի են, այսինքն՝ պետությունը չի կարող սուկ իր հայեցողությամբ սահմանափակել կամ վերացնել դրանք:

Հետևաբար, հիմնարար իրավունքների սահմանափակումների համար պիտի գործեն առավել բարձր չափանիշներ, դրանք պիտի հիմնված լինեն ժողովրդավարական պետության և հասարակության անվտանգության ապահովման կամ այլ հանրային շահերով և կարիքներով ու ամեն դեպքում, պիտի պահպանեն իրավունքի էությանը չվնասելու պահանջը: Հակառակ պարագայում անթույլատրելի են մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների որևէ սահմանափակում:

Ամփոփելով, արձանագրենք, որ վերը թվարկված՝ օտարերկրացիների մարդու իրավունքների սահմանափակումների ճնշող մեծամասնությանը չունի որևէ ծանրակշիռ իրավական հիմնավորում, որի ուժով հնարավոր կլինեք Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրացիների նկատմամբ համատարած կիրառվող վերը նշված սահմանափակումները համարել իրավաչափ: Ուստի, Հայաստանի Հանրապետությունը, կատարելով իր պոզիտիվ պարտավորությունները և դրսևորելով քաղաքական կամք, պարտավոր է ցուցաբերել հետևողականություն՝ անձի իրավունքների սահմանափակման անհիմն դեպքերը բացառելու, իսկ դրանք արդեն իսկ թույլ տված լինելու պարագայում, խախտման հետևանքներն անհապաղ վերացնելու և իրավունքը վերականգնելու ջանքեր գործադրելու ուղղությամբ, որպեսզի չտանահարվեն անձի անօտարելի իրավունքներն ու արժանապատվությունը:

3. ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների հարաբերակցությունը՝ Եվրոպայի խորհրդի անդամ պետության և ԱՊՀ միջև իրավահարաբերությունների համատեքստում

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների մարդու իրավունքների իրացման հնարավորությունների և վերջիններիս նկատմամբ ՀՀ-ում կիրառվող սահմանափակումների իրավաչափությանը, պետք է հաշվի առնել նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները՝ համադրելով Եվրոպայի խորհրդի անդամ պետության և որպես Անկախ պետությունների համագործակցության (այսուհետ նաև՝ ԱՊՀ) անդամ ՀՀ-ի ունեցած իրավական պարտավորությունները:

Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Կոնվենցիայով արձանագրված է (ընդունված՝ 23.05.1969 թ., Վիեննա, ուժի մեջ է մտել 16.06.2005թ.), որ «Կոնվենցիայով իրագործվող պայմանագրերի իրավունքի կողմնակցումը և առաջադիմական զարգացումը կնպաստեն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ նշված նպատակներին, հատկապես

միջազգային խաղաղության և անվտանգության պահպանմանը, ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը և միմյանց հետ նրանց համագործակցության իրագործմանը...»:

«Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի համաձայն «*Հայաստանի Հանրապետության ստորագրած կամ միանալու ենթակա միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության համար պարտադիր իրավաբանական ուժ է ստանում անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելուց հետո Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվելու կամ Հանրապետության նախագահի կողմից հաստատվելու միջոցով*»: (հոդված 10) Ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը ենթակա է անվերապահ կատարման: (հոդված 18)

Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի խորհրդի (այսուհետ՝ նաև ԵԽ) լիիրավ անդամ է 2001թ. հունվարի 25-ից:

Եվրոպայի խորհրդին Հայաստանի անդամակցության գործընթացը սկիզբ է առել 1995թ.: 1996թ. հունվարի 26-ին ՀՀ Ազգային ժողովը ԵԽ Խորհրդարանական վեհաժողովում ստացել է հատուկ հրավիրյալի կարգավիճակ: 2000թ. նոյեմբերի 9-ին, Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ 2000/13 որոշման համաձայն, Հայաստանը ստացել է Եվրոպայի խորհրդի անդամ դառնալու հրավերը: Ստրասբուրգում գործում է ԵԽ-ում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունը: Եվրոպայի խորհրդին անդամակցությունից ի վեր Հայաստանն անհրաժեշտ քայլեր է ձեռնարկել ԵԽ-ի առջև ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ:¹⁶

Եվրոպայի Խորհրդին Հայաստանի Հանրապետության անդամակցումից հետո ՀՀ կողմից վավերացվել են անդամակցությամբ նախատեսված բոլոր կոնվենցիաները: ԵԽ քարտուղարության և «Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի» (Վենետիկի հանձնաժողով) փորձագիտական աջակցությամբ տարբեր տարիներին փոփոխվել են ՀՀ համապատասխան օրենսգրքերն ու օրենքները:

Անդամակցումից ի վեր, Հայաստանը համագործակցում է ԵԽ մոնիտորինգային և փորձագիտական այլախի մարմինների հետ, ինչպիսիք են՝

- *ԵԽ մարդկանց շահագործման (թրաֆիկինգի) դեմ պայքարի փորձագիտական խումբը*¹⁷,
- *ԵԽ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը*¹⁸,
- *ԵԽ Գենդերային հավասարության հանձնաժողովը*¹⁹

¹⁶ Տե՛ս, <https://www.mfa.am/hy/international-organisations/5>

¹⁷ Տե՛ս, <https://rm.coe.int/greta-third-evaluation-report-on-armenia/1680a6b4ba>

¹⁸ Տե՛ս, <https://rm.coe.int/sixth-report-on-armenia/1680ab9e33>

¹⁹ Տե՛ս, <https://rm.coe.int/2021-annual-report-on-the-implementation-of-the-gender-equality-strate/1680a710cf>

- *ԵԽ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի Խորհրդատվական կոմիտեն*²⁰

Այս և նմանատիպ տարաբնույթ համագործակցությունների միջոցով ԵԽ-ն խթանում է մարդու իրավունքների հիմնարար սկզբունքների առաջխաղացման ոլորտում անդամ պետությունների օրենսդրությունների նույնականացումը: Վերջինիս նպատակը համակարգված քաղաքականության մշակումը և անդամ պետություններում ընդունված օրենքների ու չափանիշների կիրառումն է:

Եվրոպայի խորհրդին անդամակցելով, Հայաստանի Հանրապետությունն, ի սկզբանե, ձեռք է բերել այնպիսի պարտավորություններ²¹, ինչպիսիք են՝

1. *Անդամակցություն ստանալու պահին ստորագրել Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ ՄԻԵԿ) և նրան լրացնող Թիվ 1, 2, 4, 6, 7 և 11 արձանագրությունները.*

2. *վավերացնել ՄԻԵԿ-ը և նրան լրացնող Թիվ 1, 4, 6 և 7 արձանագրությունները անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում.*

3. *ստորագրել և վավերացնել Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիան և դրա արձանագրությունները անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում,*

...

4. *ստորագրել Եվրոպական սոցիալական խարտիան անդամակցություն ձեռք բերելուց հետո երկու տարվա ընթացքում և վավերացնել այն անդամակցություն ձեռք բերելուց հետո երեք տարվա ընթացքում՝ ջանալով կիրառել Խարտիայի սկզբունքներին համապատասխան քաղաքականություն.*

Ներպետական օրենսդրության մասով՝

- *անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում ընդունել Քրեական օրենսգրքի երկրորդ (հատուկ) մասը՝ de jure վերացնելով մահապատիժը,*
- *անդամակցություն ձեռք բերելուց հետո վեց ամսվա ընթացքում ընդունել օմբուդսմենի (մարդու իրավունքների պաշտպանի) մասին օրենքը,*
- *անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում ընդունել նոր օրենք լրատվամիջոցների մասին...*

Մարդու իրավունքների վերաբերյալ՝

²⁰ Տե՛ս, <https://www.coe.int/en/web/minorities/armenia>
²¹ Տե՛ս, <https://pace.coe.int/en/files/16815/html>

- կատարել դատաիրավական համակարգի համալիր բարեփոխումներ, *inter alia*, դրա շրջանակներում ապահովել դատաիրավական համակարգի լիակատար անկախությունը, երաշխավորել քրեական դատավարություններում դատապաշտպանի լրիվ և անմիջական մատչելիությունը (պարտադիր անչափահասների համար), որի ծախսերը՝ անհրաժեշտության դեպքում, պետք է հոգա պետությունը,
- ընդունել այլընտրանքային ծառայության մասին եվրոպական չափանիշներին համապատասխան օրենք և միննույն ժամանակ ներում շնորհել համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունը մերժելու պատճառով ազատագրված կամ ուղղիչ աշխատանքի դատապարտված անձանց՝ նրանց հնարավորություն ընձեռելով ընտրություն կատարել չզինված ռազմական կամ այլընտրանքային քաղաքացիական ծառայության միջև, այլընտրանքային ծառայության մասին օրենքի ուժի մեջ մտնելուց հետո,
- և այլ պարտավորություններ:

Եվրոպայի խորհրդի ծրագրերի իրականացման տնօրինության ղեկավար Կլաուս Կոլկիբիլը, Եվրախորհրդի կողմից Հայաստանի համար իրականացվող գործողությունների՝ 2023-26 թթ. ծրագրի ներկայացման ժամանակ, խոսելով ԵԽ-Հայաստան համագործակցության ոլորտում որակական աճի մասին, մասնավորապես, նշել է.

«... Ունենք հիանալի համագործակցություն տարբեր պետական մարմինների ու գերատեսչությունների հետ, ինչը հնարավոր է դարձրել մեր աջակցության ընդլայնումը՝ ընդգրկելով մի քանի նոր ոլորտներ: Այժմ զբաղվում ենք մարդու իրավունքների պաշտպանության հարցերով նաև զինված ուժերում, զբաղվում ենք ընտրական և արդարադատության ոլորտների բարեփոխումներով, տնտեսական հանցագործությունների դեմ պայքարով, կենսաբժշկության, պրոբացիայի, փախստականների հետ կապված խնդիրներով, տեղական ժողովրդավարությանն առնչվող հարցերով: Մեկ տարվա ընթացքում բոլոր ուղղություններով առկա է տեսանելի առաջընթաց: Շնորհավորում ենք Հայաստանի իշխանություններին՝ 13-րդ արձանագրությունը վավերացնելու համար: Խոսքը մահապատժի վերացման մասին է: Գործողությունների ծրագրի հիմքում մարդու իրավունքների գերակայության մոտեցումն է: Աշխատում ենք նաև քաղաքացիական կրթության հետ՝ շեշտը դնելով թափանցիկության և խտրականությունը բացառելու սկզբունքների վրա»:²²

Հայաստանը ԵԽ անդամակցմամբ ստանձնել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործուն քայլերի իրականացման առաքելությունը, որն իրականացնում է նախ և առաջ ՀՀ օրենսդրությունը Եվրոպական միջազգային չափանիշների համապատասխանեցնելու քաղաքականության միջոցով:

²² Տե՛ս, <https://shorturl.at/VNfzr>

Ի թիվս ՀՀ-ի՝ Եվրոպայի խորհրդին անդամակցմանը և դրանից բխող պարտավորությունների կատարմանը, , հավելենք, որ ՀՀ-ն ունի նաև համագործակցային փաստաթղթեր՝ կնքված Եվրոպական միության հետ, որպիսին է օրինակ՝ 2017թ. նոյեմբերի 24-ին ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը²³: Համաձայնագրի վկայակոչումը հատկանշական է նրանով, որ դրա անդամ եվրոպական երկրները հանձն են առել *«համապարփակ մոտեցմամբ ամրապնդել միգրացիայի, ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման վերաբերյալ իրենց երկխոսությունը և համագործակցությունը՝ ուշադրություն դարձնելով օրինական միգրացիային և անօրինական միգրացիայի ու մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված համագործակցությանը»*: Միաժամանակ, համաձայնագրի վավերացմամբ և դրա մասը կազմելով ՀՀ-ն ընդունել է հանձնառություն՝ *«իր օրենսդրությունն աստիճանաբար Եվրոպական միության օրենսդրության համապատասխան մասերին մոտարկելու, որպես լայնածավալ բարեփոխումներին ուղղված իր ջանքերի մաս՝ այն արդյունավետորեն իրականացնելու, և իր վարչական ու ինստիտուցիոնալ կարողությունները սույն Համաձայնագրի կատարման համար անհրաժեշտ ծավալով զարգացնելու մասով»*:

Այսպիսով, ամփոփելով ՀՀ գործուն անդամակցումը Եվրոպական խորհրդի, և համագործակցային հարաբերությունները՝ Եվրոպական միության հետ, պիտի նշենք, որ ՀՀ-ն զուգահեռաբար երկխոսում է նաև Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) հետ, որը ձևավորվելով 1991 թվականին, սկզբնական կազմում ունեցել է միայն Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի մասնակցությունը: 1991թ. դեկտեմբերի 21-ին, 11 պետություններ՝ այդ թվում նորանկախ Հայաստանի Հանրապետությունը, ստորագրելով համաձայնագրին կից արձանագրությունը, ձևավորել են ԱՊՀ-ն:

ԱՊՀ գործունեության հիմքում ընկած՝ 1993թ. հունվարի 22-ին ընդունված Կանոնադրությամբ ամրագրված են ԱՊՀ անդամների /Կողմերի/ նպատակները, հետևյալի կապակցությամբ՝

- համագործակցություն քաղաքական, տնտեսական, բնապահպանության, հումանիտար, մշակութային և այլ ոլորտներում,
- մասնակից պետությունների տնտեսական և սոցիալական համակողմանի և համաչափ զարգացում ԱՊՀ շրջանակներում,
- *մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ապահովում՝ միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և նորմերին համապատասխան.*
- համագործակցություն միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման ուղղությամբ, ինչպես նաև սպառազինությունների և ռազմական ծախսերի կրճատման, համընդհանուր և լիակատար զինաթափման հասնելու համար արդյունավետ միջոցների ձեռնարկում,

²³ Տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=9798&Reading=0>

- համագործակցության մասնակից պետությունների միջև առկա վեճերի և հակամարտությունների խաղաղ կարգավորում,

- աջակցություն մասնակից պետությունների քաղաքացիներին՝ ԱՊՀ տարածքում ազատ տեղաշարժի ու շփումների հարցում, և այլն:

Արդեն հետագա տարիներին, ի կատարումն ԱՊՀ շրջանակներում ստանձնած պարտավորությունների, անդամ պետությունների միջև սկսվել են տարբեր հարցերի կարգավորմանն ուղղված միջպետական պայմանագրերի, համաձայնագրերի ստորագրման, վավերացման և դրանք ներպետական օրենսդրության մաս դարձնելու գործընթացը: Այդ գործընթացի շրջանակներում ՀՀ-ն, մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում ԱՊՀ անդամների հետ վավերացրել և մասնակից է դարձել այնպիսի կոնվենցիաների, համաձայնագրերի կամ միջազգային պայմանագրերի, ինչպիսին, օրինակ՝

- Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին Կոնվենցիան է (ընդունված՝ 22.01.1993թ.-ին, Մինսկ), որի շրջանակներում՝ *«Պայմանավորվող կողմերը միմյանց իրավական օգնություն են ցույց տալիս հարցվող Պայմանավորվող կողմի օրենսդրությամբ նախատեսված դատավարական և այլ գործողություններ կատարելու, մասնավորապես, փաստաթղթեր կազմելու և փոխանցելու, խուզարկության, իրեղեն ապացույցներ առգրավելու, փոխանցելու և հանձնելու, փորձաքննություն անցկացնելու, կողմերի, մեղադրյալների, վկաների, փորձագետների հարցաքննության, հանցագործություն կատարած անձանց դեմ քրեական հետապնդում հարուցելու, նրանց հետախուզման ու հանձնման, քաղաքացիական գործերով դատական որոշումների և քաղաքացիական հայցի մասով՝ դատավճիռների, կատարողական մակագրությունների ճանաչման և կատարման, ինչպես նաև փաստաթղթերի հանձնման միջոցով»:* «Իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ հանձնարարություն կատարելիս հարցվող մարմինը կիրառում է իր երկրի օրենսդրությունը»:

Այսպիսով, ստացվում է, որ Հայաստանի Հանրապետությունը, անդամակցելով Եվրոպայի Խորհրդին, ստանձնելով վերջինիս անդամակցմամբ պայմանավորված միջազգային պարտավորությունները՝ հանձին մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միասնական սկզբունքների ձևավորման, նաև ունենալով մի շարք համաձայնագրեր Եվրոպական միության հետ, միաժամանակ, շարունակում է կրել պարտավորություններ որպես ԱՊՀ-ի անդամ պետություն: ԱՊՀ անդամակցումն ու դրա շրջանակներում պարտավորությունների կատարումն ուղղակի հակասության և անհամատեղելիության մեջ են գտնվում որպես Եվրոպայի խորհրդի անդամ ՀՀ վերցրած պարտավորությունների հետ: Առավել ևս, երբ՝ ԱՊՀ անդամ գլխավոր պետություններից մեկի՝ Ռուսաստանի Դաշնության կողմից 2022 թվականի փետրվարի 24-ին Ուկրաինայի դեմ պատերազմ սանձազերծելուց մեկ օր անց՝ փետրվարի 25-ին, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, խորհրդակցելով ԵՄԽՎ-ի հետ, գործարկեց կառույցի կանոնադրության 7-դ և 8-րդ կետերը և նախաձեռնեց Ռուսաստանի Դաշնությանը Եվրոպայի Խորհրդից արտաքսելու

գործերի նախարարություն, ՀՀ Ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ և ըստ ենթակայության՝ այլ իրավասու մարմինների: Առ այսօր, 20 քաղաքացիների գործով իրականացվում է փաստաբանական ներկայացուցչություն՝ ՀՀ պետական և դատական ատյաններում, նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում: Քաղաքացիներին տրամադրվում է իրավական պաշտպանություն ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայությունում՝ ապաստանի հարցերով:

ՀՔԱՎ դիմած քաղաքացիների ճնշող մեծամասնության նկատմամբ ՌԴ-ում կամ ԲՀ-ում հարուցված քաղաքական հետապնդման նպատակով հարուցված քրեական վարույթը և իրականացվող քրեական հետապնդումը հիմք է հանդիսացել ՀՀ-ում իրավական սահմանափակումների՝ մասնավորապես ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման համար, ինչը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կողմից իր տարածքում գտնվող օտարերկրյա քաղաքացիների իրավունքների կոպիտ խախտում: Ուստի, ձեռնարկվել և ձեռնարկվում են այդ խախտումները վերացնելուն ուղղված բոլոր անհրաժեշտ ջանքերը՝ այս խնդրին համակարգային լուծում տալու նպատակով: Կազմակերպության գործունեության կարևորագույն խնդիրներից է մարդու իրավունքների վերականգնումը համակարգային լուծումների միջոցով: Այս իսկ նպատակով օտարերկրացիների մարդու իրավունքների պաշտպանության նպատակով ամիսներ շարունակ համապատասխան գրություններով դիմել ենք ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ՀՀ Գլխավոր դատախազություն, ՀՀ Ներքին գործերի Նախարարություն և ՀՀ Արդարադատության նախարարություն, որով մշտապես պահանջ է ներկայացվել հատկապես քաղաքական հետապնդման ենթարկվող անձանց նկատմամբ ՀՀ-ի կողմից ապօրինի կիրառվող տեղաշարժի ազատության սահմանափակումները վերացնելու համար: Ներկայացվող նամակներին ի պատասխան հայտնել են, որ հարցը իրենց քննարկման և ուշադրության տիրույթում է և կձեռնարկվեն միջոցներ:

Հերթական գործերից մեկով ներկայացված դիմումներից մեկին ի պատասխան ՀՀ ՆԳՆ-ից հայտնել են, որ Ի.Բելաչեուի սահմանը հատելու սահմանափակումը վերացվել է հաշվի առնելով ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից մշտապես ներկայացվող դիմումները այս հարցին լուծում տալու ուղղությամբ և մշակվել է գործնականում կիրառելի և հնարավոր ձևաչափ, ըստ որի անձինք, ովքեր ապաստանել են Հայաստանի Հանրապետության տարածքում նրանց ազատ տեղաշարժի և ազատության իրավունքները չեն սահմանափակվում: Հարցի համակարգային լուծման արդյունքում կազմակերպության 20 շահառուների ՀՀ ազատ մուտք գործելու իրավունքը, ազատ տեղաշարժի իրավունքը չի սահմանափակվում և վերջիններս հնարավորություն են ունեցել անարգել հատելու ՀՀ սահմանը մուտք գործելիս, նաև այլ պետություն մեկնելիս, որն այցելելու համար ունեն հումանիտար վիզա:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ օտարերկրացիների ազատ տեղաշարժի իրավունքի խախտումները վերացնելու ուղղությամբ կազմակերպությունը

համակարգային լուծման բանաձև է առաջարկել ՀՀ իշխանություններին, որոնք դա կիրառելի են դարձրել՝ դրան իրավական ուժ տալու միջոցով կենսագործելով տասնյակ քաղաքացիների իրավունքների իրական պաշտպանությունը ՀՀ տարածքում:

Անդրադառնալով ՌԴ և ԲՀ քաղաքացիների գործերին, վերստին նշենք, որ գրեթե բոլոր գործերով օրինաչափություն է ՌԴ-ի կամ ԲՀ-ի կողմից իր քաղաքացիների նկատմամբ նախաձեռնվող քրեական վարույթները որպես քաղաքական հետապնդման գործիք կիրառելը: Քանզի քաղաքացիների դեմ հարուցված քրեական գործերի ճնշող մեծամասնության դեպքում առաջադրված հողվածները ՌԴ քրեական օրենսգրքում ավելացվել են 2022թ. փետրվարի 24-ից՝ Ռուսաստանի կողմից Ուկրաինայի դեմ սանձազերծած պատերազմից հետո և կոչված են մարդկանց՝ իրենց իշխանությունների վարքագիծը քննադատողներին, պատերազմի դեմ արտահայտող համոզմունքներն ու դիրքորոշումները ճնշելուն և լռեցնելուն:

Խոսելով արդեն իսկ արձանագրված արդյունքներից, հայտնենք, որ ներկայացվող ժամանակահատվածում.

- ՌԴ-ում քաղաքական դիրքորոշումների պատճառով քրեական վարույթով մեղադրյալի իրավական կարգավիճակ ունեցող, և այդ հիմքով ՀՀ-ում ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակումների ենթարկված /*ՀՀ-ից էլքի արգելք/ քաղաքացիների 20-ի նկատմամբ արդեն իսկ արտադատական կարգով հանվել են իրավական սահմանափակումները և վերջիններս հնարավորություն են ստացել օգտվելու այլ պետություններից ստացած հումանիտար վիզաներից և անարգել լքելու ՀՀ պետական սահմանը:

- Քաղաքացիներից երեքի նկատմամբ ՀՀ կայացրել է ՌԴ կողմից ներկայացված արտահանձման պահանջները մերժելու մասին որոշումներ ու վերջիններս նույնպես, արդեն մեկնել են ՀՀ-ից:²⁷

- ՀՔԱՎ գրասենյակին դիմած քաղաքացիներից առնվազն 10 գործերով արագ արձագանքի և ձեռնարկված իրավական աջակցության արդյունքում, անհապաղ ազատ են արձակվել ՀՀ-ում անհիմն ազատազրկված ՌԴ քաղաքացիները:²⁸

- ՀՀ կողմից կիրառված սահմանափակումները հանելուն պարտավորեցնելու կամ կիրառված, սակայն արդեն հանված սահմանափակման գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ 9 հայցադիմում այս պահին գտնվում է ՀՀ վարչական դատարանի վարույթում:

- Արտադատական իրավական պաշտպանության մեխանիզմներ են գործադրված մոտ 20 օտարերկրյա քաղաքացու գործով:

²⁷ Տե՛ս, ՀՔԱՎ գրասենյակի հրապարակումը՝

<https://hcav.am/en/maria-rose-17-07-2023/>

²⁸ Տե՛ս, <https://www.aravot.am/2023/07/20/1356484/>

- Կազմակերպություն դիմած քաղաքացիներից հինգի պարագայում ի թիվս ներպետական ատյաններում իրավական աջակցության, համապատասխան դիմումներ են ներկայացվել նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարան:

- Մնացած դեպքերով քաղաքացիները, դիմելով ՀՔԱՎ գրասենյակին, ստացել են բանավոր իրավական խորհրդատվություն կապված ՀՀ-ում օրինական հիմքերով բնակություն հաստատելու, մասնավորապես կացության կարգավիճակի ստացման, հաշվառման, քաղաքացիության ձեռքբերման, ապաստանի և փախստականի կարգավիճակի ձեռքբերման, աշխատանքի թույլտվության ստացման, առողջապահական կամ ՀՀ տարբեր իրավունքի ճյուղերին առնչվող այլ հարցերով:

Ամփոփելով օտարերկրացիների իրավունքների պաշտպանության ոլորտում կազմակերպության գործունեությունը, անհրաժեշտ է արձանագրել այն կարևոր և անքակտելի գաղափարը, որ իրավական պետություն համարվող Հայաստանի Հանրապետությունը չպետք է դառնա միջազգային հանրության, կազմակերպությունների /ՄԱԿ, ԵՄ, ԵԽ, ԵԱՀԿ/ կողմից ագրեսոր ճանաչված և ոչ ժողովրդավար պետությունների անօրինական պահանջների և դրանց արդյունքում մարդու իրավունքների մասսայական խախտումների իրականացման գործիք և պարտավոր է իրականացնել միայն այնպիսի գործողություններ, որոնք բխում են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության ու երաշխավորման սկզբունքից:

Առաջարկություններ.

1. Հակասահմանադրական ճանաչել Հայաստանի Հանրապետության կողմից ԱՊՀ շրջանակներում, ինչպես նաև ՌԴ-ի, Բելոռուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Թուրքմենստանի հետ միջպետական պայմանագրերով վերցրած պարտավորությունները, որոնց կատարումը կհանգեցնի Եվրոպայի խորհրդի անդամ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորություններով սահմանված մարդու իրավունքների խախտմանը:

2. Բացառել օտարերկրացիների արտահանձնումը բոլոր այն դեպքերում, երբ կա իրական վտանգ՝ վատ վերաբերմունքի ենթարկվելու այն պետությունում, որի կողմից անձը գտնվում է հետախուզման մեջ:

3. Քաղաքական հետապնդման նպատակ ունեցող գործերով բացառել սահմանային էլեկտրոնային տեղեկատվական համակարգի կիրառմամբ ՀՀ-ից անձանց ելքի և մուտքի արգելքները:

4. Բացառել բռնապետական և ոչ ժողովրդավար պետություններից և մահապատիժը որպես պատժի տեսակ կիրառող պետություններից ստացված արտահանման միջնորդությունների հիման վրա ազատությունից զրկելը և միանգամից մերժել ներկայացված միջնորդությունները միջազգային սկզբունքի կիրառմամբ:

5. Իրենց պետություններում քաղաքական հետապնդման ենթարկված և ՀՀ որպես իրավունքների խախտման տեսանկյունից անվտանգ պետություն ընտրած բոլոր օտարերկյա քաղաքացիներին տրամադրել քաղաքական ապաստանի իրավունք: